

3809



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«30» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 057 - 26

Նախաձեռնող՝

Նարեկ Ղափլանյան

ք. Երևան, Լենինգրադյան փ. շենք 31/8, բն. 26

Գործունեությունը՝

Ամֆիթատրոնի, հանգստի և հյուրանոցային գոփու կառուցում

Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջան բնակավայր, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 1-ին քառ.

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 057 - 26

«30» ապրիլ 2026թ.

**Տավուշի մարզի Դիլիջան բնակավայրում ամֆիթատրոնի, հանգստի և
հյուրանոցային գոտու կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ Ներկայացված նյութեր՝	Նարեկ Ղափլանյան Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝ Գտնվելու վայրը՝	«Բ» կատեգորիա Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջան բնակավայր

Ներածական մաս. Քաղաքացի Նարեկ Ղափլանյանի կողմից նախատեսվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան բնակավայրում, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի 1-ին քառ. հասցեում՝ հանգստի համար նախատեսված հողամասերում կառուցել ամֆիթատրոն, հանգստի և հյուրանոցային գոտի: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի փորձաքննությունն իրականացվում է Բ կատեգորիայի ընթացակարգով:

Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները՝ № 01082024-11-0033 /ծածկագիրը՝ 11-003-0674-0093/, № 30072024-11-0073 /ծածկագիրը՝ 11-003-0674-0098/, Դիլիջանի համայնքապետարանի կողմից 01.08.2024թ.-ին տրված № Ա1-126 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքում և դրանից 2 կմ շառավղով հատվածում բացակայում են պատմամշակութային (կամ) և բնության հուշարձաններ:

Համաձայն նախագծի նախատեսվում է կառուցել 8 հատ երկու տիպի օբյեկտներ, սրճարան, ամֆիթատրոն՝ բեմ, պահակակետ, թռչունների դիտման կայաններ:



Կառուցապատումն իրականացվելու է պահպանելով անտառի բնական տեսքը՝ առանց ծառահատման:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Մ-4 միջպետական ճանապարհից ավելի քան 2 կմ, հանգստյան տներից՝ 430 մ, Պարզ լճից՝ 2.3 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 17950 մ²,
- կառուցապատման մակերես՝ 1138 մ²,
- բարեկարգման մակերես՝ 2068 մ²,
- կանաչապատման մակերես՝ 14744 մ²:

Շինությունները բարդ ուղղանկյուն ուրվագծերով, երկաթբետոնե մոնոլիթ սյուն հեծանային կառույցներ են, որոնք տեղադրվելու են գրոյական նիշում՝ առավելագույնը 6.60 մ բարձրությամբ: Շինության հիմքերը լինելու են միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով: Բոլոր կառույցները՝ քոթեջները, սրճարանը և բեմահարթակը նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկտիվ լուծումներով: Ամֆիթատրոնը կառուցվելու է օգտագործելով բնական ռելիեֆը: Բոլոր շինությունների տեղադիրքն ընտրվել է ոչ ծառային հատվածներում՝ պահպանելով անտառի բնական տեսքը:

Տարածքում նախատեսվում է մեքենաների և մարդկանց շարժը ապահովելու ճանապարհներ, որոնց ուղին ընտրվել է ըստ ռելիեֆի և ծառերի տեղադիրքի թելադրանքի: Ճանապարհները նախատեսվում է իրականացնել ջրանցիկ սալահատակի տեսքով՝ անտառի բնական տեսքը և կանաչապատ ռելիեֆը պահպանելու նպատակով:

Հողատարածքի պարագծով նախատեսվում է իրականացնել ցանկապատ: Ցանկապատը լինելու է մետաղական՝ երկաթյա ձողերով բարձրությունը՝ 2 մ, ընդհանուր երկարությունը՝ 480 գծ.մ:

Շահագործման փուլում շինություններն ապահովված են լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով:

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, ճանապարհի կարգաբերում: Տարածքում լրացուցիչ կանաչապատում չի նախատեսվում, քանի որ, տարածքն արդեն իսկ ամբողջությամբ կանաչապատ է՝ 82.14 %, իսկ կառուցապատումն իրականացվելու է կանաչապատումից ազատ հատվածներում:

Նախատեսվող տարածքի էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի: Ջրամատակարարումն իրականացվելու է նախատեսվող գործունեության հարևանությամբ անցնող, շրջակա միջավայրի նախարարությանը պատկանող խողովակից, որի համար նախաձեռնողը կդիմի թույլտվության ստացման համար:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շինհրապարակի ձևավորում, որը ամբողջ գործունեության տարածքն է: Շինհրապարակի ջրցանվող մակերեսը կազմելու է 1000 մ²: Շինհրապարակն ապահովված է լինելու աղբի պահման տարածքով և գիշերային լուսավորությամբ: Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, լոգարանը, հանդերձարանը, գրասենյակը, տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում:

Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը հեռացվելու են շինհրապարակում տեղադրված բիոզուգարաններ: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստիկ վերգետնյա խողովակներով բակային սելավային



ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 3տ տարողությամբ պարզարան: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադք: Տեղադրվելու է 10տ տարողությամբ ջրի բաք՝ տեխնիկական ջրի համար, որը կօգտագործվի ջրցանի և հրդեհամարման նպատակով:

Շինհրապարակը ցանկապատվելու է 1.6 մ բարձրությամբ մետաղական վահանակային պատնեշով՝ ալիքավոր մետաղաթիթեղով:

Շինարարական աշխատանքների ժամանակ հողային հանույթը կազմելու է 700 մ³, որից հետլիցքը կազմելու է 600 մ³, իսկ 100 մ³ ծավալով բուսահողը հանվելու և պահվելու է հետագա կանաչապատման ժամանակ:

Շինարարության փուլում առաջանալու են հետևյալ կոշտ թափոնները՝ կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) կառուցապատման փուլում՝ 19800 կգ/տարի, յուղոտված լաթեր՝ 1.5 կգ, յուղերով աղտոտված ավազ՝ 1 մ³, կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ 1 տ/տարի քանակով:

Նախատեսված գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով՝ նախատեսվում է շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր բացասական ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվելու են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների համապատասխան խլացուցիչներով ապահովում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,



- շինարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինարարական հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում՝ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռքբերում լիցենզավորված մատակարարներից՝ բետոնախառնիչ մեքենաներով՝ բնետոնաշաղախային հանգույցներից,
- մեքենասարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 1.5 մլն ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Տավուշի մարզի Դիլիջան համայնքապետարանում անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետարանից, Դիլիջանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատումն իրականացնել ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի N920-Ն որոշմամբ ընդունված՝ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրության VIII գլխին (պարկի ռեկրացիոն գոտում տարածքների օգտագործումը) համապատասխան:
2. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:



3. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
4. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան, պահպանելով բնական լանդշաֆտը:
5. Առաջնորդվել Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N611-Լ որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների» ծրագրով, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանով սահմանված պահանջներով (մասնավորապես կարևորելով փոշենստեցման՝ այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառումը):
6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:
7. Նախատեսվող գործունեության տարածքում աշխատանքներն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ին «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
8. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերի և կենդանիների հայտնաբերման դեպքում՝ դադարեցնել աշխատանքները և տեղեկացնել լիազոր մարմին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Նարեկ Ղափլանյանի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան բնակավայրում ամֆիթատրոնի, հանգստի և հյուրանոցային գոտու կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Հրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան